Յոհ. Ենջեկե և որդիք ֆիրմայի ժողովածուում (Հարլեմ քաղաք), նույնպես գոյություն ունի „Alphabetum Armenum" 1784 թ. նոր հրատարակությամբ։ Այս գրքույկի լրիվ վերնագիրը հետևյալն է։ „Alphabetum Armenunum cum Oratione dominicali, Salutatione angelica. initio Evangelii S. Johannis et Cantico poenitentiae. Romae MDCCLXXXIV. Typis S. Congreg. de propaganda fide. Praesidum adprobatione"։ Այս երկի հեղինակ Յոհաննիս Քրիստոֆորուս Ամադուտիուսը, որի մասին արդեն հիշել ենք, մեզ պատմում է, որ այբբենարանները, որոնք արդեն սպառված են, միշտ էլ վերատպագրվում են, և ավելին, որ այս 1784 թ.-ի հրատարակությունը փոխարինում է նախկին 1673 թ.-ի հրատարակությանը։ Այնուհետև Յոհաննիսը տալիս է մեզ մի կարևոր ակնարկ լեզվի և նրա տառերի գրության պատմության մասին։ Նա պատմում է, որ 17-րդ դարում հոչ հոգևոր հովիվ Ովգանուս վարդապետը Երևանից, ուղարկված է եղել Եվրոպա հոգալու և հաշդությամբ տպագրելու աստվածաշունչն ու պատարագի գրքերը. հետո, որ այս Ովգանուսը մեկնել է Վենետիկ և Ամստերդամ հոգալու հայ տառերի ձուլումը և սուրբ գրքերի տպագրությունը։ Նա նույնպես պատմում է, որ Հռոմում Կոնգրեգացիան սկսեց տպագրել, և մի գիրք արդեն հրատարակեց 1623 թ.։

Մենք պետք է ուշադրություն հրավիրենք նաև տառաձուլման և տպագրական հաստոցների «Ամստերդամ» հրատարակությունում զետեղված (1924 թ.) պրոֆ. Դր. Գ. Ֆոն Անտալի մի հոդվածի վրա (էջ 19—21), որի վերնագիրն է. Nicolaas Witsen en de Armenishe drukkerij" («Նիկոլաս Վիտսեն և հայկական տպարանը») և որը գտնվում է Ամստերդամի քաղաքային արխիվում։ Այդտեղ մենք գտնում ենք, որ Ամստերդամի նախկին քաղաքագլուխը՝ գիտնական Նիկոլաս Վիտսենը որոշ չափով զբաղված է եղել հայկական տառատիպերի պատրաստման գործով։ Նիկ. Վիտսենը, որը ծնվել է 1641 թ. և 1682—1705-ը եղել է Ամստերդամի քաղաքագլուխը, կարող էր հետևել բավական մոտիկից հայկական գրքերի տպագրության պատմության զարգացմանը մայրաքաղաքում, և, իր բարձր կրթության ու բազմակողմանի հետաքրքրության շնորհիվ, իրոք բավական ուշադրություն էր դարձնում այդ բանի վրա։ Պրոֆ. Ֆոն Անտալը պատմում է մեզ, որ Նիկոլաս Վիտսենը՝ Վրաստանում հայերեն գրքեր տպագրելու առթիվ, Միքիթարֆալենից հարաբերության մեջ մտավ հունգար գրող և գրքերի տպագրիչ Նիկոլաս Կիսի հետ, որի համար տառեր պետք է փորագրված լինեին արդեն։ Այս Կիսը Նիկոլաս Վիտսենի օգնությամբ պատվեր ստացավ պատրաստելու հայերեն տառատիպեր, որոնք պետք է ուղարկվեին Վրաստանի թագավորին՝ երկրում հիմնվելիք մի տպարանի համար։

Դր. Կարլ Բյորկրոմի (dr. Carl Björkbom) հաղորդագրությունից (Henric III Keysers Georgiska Stilprov, Nordisk Tidskrift för Bok-och Bibliotekvasen, № 22. 1935) մենք իմանում ենք, որ Նիկոլաս Կիսի՝ Ամստերդամից ուղարկված երկու նամակները (1686—87) գտնվում են Լինկոպինգի Սուիֆտ—գրադարանում։ Այդ նամակներից մենք շատ բան ենք իմանում Նիկոլաս Կիսի մասին։ Նա երևան է գալիս ոչ միայն որպես մի անձնավորություն, որ հրաշալի կերպով տիրապետում է տառեր կտրելու գործին, այլ և գիտեր մեկնաբանություններ տալ լատիներեն լեզվով։

Նիկոլաս Կիսը ծնվել է Ալսո-Միսոտֆալուում (Alsö-Miszótfaln) 1650 թ., և ստացել է աստվածաբանական կրթություն։ Մոտավորապես 1680 թ. նա մեկնել է Նիդերլանդիա, այդտեղ համալսարանում աստվածաբանի կոչում ստանալու համար։ Միաժամանակ նա որպես սրբագրիչ պիտի աշխատի Ամստերդամում Դանիել Էլզևիրի մոտ հունգարերեն ավետարանը սրբագրելու համար։ Պարիզ անունով իր բարեկամը Կիսին խորհուրդ տվեց, որ գալով Ամստերդամ նա կարող է քարոզելու փոխարեն տպագրական գործով զբաղվել։

„Het Boek" պարբերականը (6-րդ տարի, 1917) պարունակում է Ե. Միկոսի՝ «Հունգարական բիբլիաները Ամստերդամում» խորագրով հոդվածը, որտեղ մենք գտնում ենք կարևոր մանրամասնություններ Նիկոլաս Կիսի մասին։ ...Միկլոսն ասում է, որ Վրաստանի (Կովկասում) իշխան Արչիլը (Artsil) դիմեց քաղաքագլուխ Նիկողաոս Վիտսենին, խնդրելով փնտրել իր համար մի ընդունակ տառ կտրողի, որը կարողանա իր գրած այբուբենով պատրաստել առաջին հայերեն տառերը։ Քաղաքագլուխ Վիտսենն այդ աշխատանքը վստահեց Նիկոլաոս Կիսին, որն, անկասկած, լավագույն կերպով կատարեց հանձնարարությունը, որովհետև Վիտսենին, իր միջնորդության համար, շնորհակալություն հայտնվեց 1686 թ. դեկտեմբերի 17-ին գրած նամակով։ Միկլոսի այս խոսքերից կարելի է հասկանալ, թե այն մանրամասնությունները, որ մենք գտանք „Typografische Mededelingen"-ում տպագրված՝ պրոֆ. Ֆոն Անտալի հոդվածում, ըստ որի Կիսը դիմել է քաղաքագլուխ Վիտսենի օգնությանը հայերեն տառեր կտրելու համար. մի փոքր այլ կերպ են։ Թվում է, որ այս գործում նախաձեռնությունը վերցրել է Ամստերդամի քաղաքագլուխը, որն և խնդրել է Նիկոլաոս Կիսին կտրելու հայերեն տառերը։ Այս խնդիրն